

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 29 » հոկտեմբերի 2013 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ՊԴ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 1.1. Սույն Կանոնակարգը սահմանում է «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԳՊՄԻ) պրոֆեսորադասախոսական (այսուհետ՝ ՊԴ) և ուսումնաօժանդակ կազմերի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման ուղղությամբ իրականացվող գործընթացը՝ հիմնվելով «ՀՀ Բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքի» 19-րդ հոդվածի 6-րդ կետի 5-րդ ենթակետի վրա:
- 1.2. Կանոնակարգի նպատակն է բարելավել ԳՊՄԻ-ի ՊԴ և ուսումնաօժանդակ կազմերի ընդհանրական և մասնագիտական հմտությունները՝ Եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելը և շարժունության գործընթացի պահանջներն ապահովելը:
- 1.3. Կանոնակարգը ապահովում է ԳՊՄԻ-ի ՊԴ և ուսումնաօժանդակ կազմերի պաշտոնատեղերի տեղակալման համապատասխանեցումը աշխատակիցների ընդհանրական, առարկայական և հետազոտական կարողություններին:
- 1.4. ԳՊՄԻ-ում ՊԴ կազմի վերապատրաստումն ու մասնագիտական որակավորման բարձրացումն իրականացվում է երկու ուղղություններով՝ ընդհանուր-պարտադիր և հատուկ-մասնագիտական:
- 1.5. Ուսումնաօժանդակ կազմի որակավորման բարձրացման առումով աշխատակիցներին հնարավորություն տալ կրթությունը շարունակել հաջորդ կրթական մակարդակներում (մագիստրոսի, հետազոտողի)՝ պահպանելով աշխատանքային նույն պայմանները:
- 1.6. Սույն կանոնակարգի կիրառումը պարտադիր է ԳՊՄԻ-ի հիմնական հաստիքային (մրցութային) և պայմանագրային (ոչ մրցութային) կարգով աշխատող դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի համար:

- 1.7. ՊԴ-ի կազմի վերապատրաստման հատուկ-մասնագիտական բաղադրիչից կարող են ազատվել մրցույթային կարգով պաշտոններ տեղակալած այն դասախոսները, ովքեր հնգամյա ժամանակահատվածում պաշտպանել են թեկնածուական, դոկտորական ատենախոսություններ կամ ստացել են դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումներ կամ դասախոսի աշխատանքի անհատական պլանի հիման վրա գնահատվել են իբրև արդյունավետ աշխատող:
- 1.8. Վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման իրականացման ֆինանսավորումը կատարվում է ԳՊՄԻ-ի կողմից:

2. ՊԴ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

- 2.1. ՊԴ-ի և ուսումնաօժանդակ կազմերի վերապատրաստումն իրականացվում է ԳՊՄԻ-ի հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի կողմից ըստ համապատասխան ծրագրերի և ժամանակացույցի:
- 2.2. Դասախոսի անհատական պլանի ուսումնամեթոդական աշխատանքների կառուցամասերում պետք է արտահայտվի վերապատրաստման ենթակա դասախոսի լրացուցիչ ծանրաբեռնվածությունը՝ համապատասխան ժամաքանակով:
- 2.3. Ուսումնաօժանդակ կազմի վերապատրաստումը իրականացվում է աշխատանքային գործընթացին զուգահեռ՝ ստորաբաժանման ղեկավարի կարգավորմամբ:
- 2.4. Եթե ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները որակավորման բարձրացման նպատակով սովորում են հաջորդ կրթական մակարդակներում (մագիստրատուրայում, ասպիրանտուրայում), թույլատրել ուսումնառության իրականացումը՝ աշխատանքային պարտականությունների պատշաճ մակարդակով իրականացնելու պարագայում և ստորաբաժանման ղեկավարի կողմից աշխատաժամանակի կարգավորմամբ:
- 2.5. Վերապատրաստման իրականացման ուսումնական ծրագրերի և ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ԳՊՄԻ-ի կայքում և ներքին ցանցում:
- 2.6. Վերապատրաստման մասնակցության հայտերը ներկայացվում են մասնագիտական ամբիոնների որոշմամբ՝ հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի կողմից ներկայացված տեղերին համապատասխան:

3. ԳՊՄԻ-ՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

- 3.1. ՊԴ-ի կազմի վերապատրաստման ընդհանրական բաղադրիչը կազմված է պարտադիր և տարբերակված մասերից:
 Ընդհանրական-պարտադիր բաղադրիչն ունի երկու ուղղություն՝
 - 1) մեթոդամանկավարժական,
 - 2) տեղեկատվական տեխնոլոգիաներ. տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում :
 Ընդհանրական-տարբերակված բաղադրիչն ունի մեկ ուղղություն՝ օտար լեզուների ուսուցում:

- 3.2. Վերապատրաստման ընդհանրական-պարտադիր և հատուկ-մասնագիտական բաղադրիչների ծրագրերը կազմվում են համապատասխան մասնագիտական ամբիոնների կողմից, ներկայացվում գիտական խորհրդի քննարկմանը և հաստատվում ռեկտորի կողմից:
- 3.3. Հատուկ-մասնագիտական բաղադրիչով վերապատրաստումը համապատասխան ամբիոնի որոշմամբ կարող է իրականացվել առաջատար բուհերում (հայաստանյան և օտարերկրյա)՝ առկա, հեռակա կամ հեռահար եղանակով:
- 3.4. Ուսումնառության կազմի վերապատրաստումը կատարվում է երկու ուղղությամբ.
 - 1) համակարգչային գրագիտություն
 - 2) օտար լեզվի իմացություն

4. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- 4.1. ՊԴ-ի կազմի վերապատրաստումն ավարտվում է մեկ օրինակելի դասի ցուցադրմամբ, որը գնահատվում է հանձնաժողովի կողմից:
- 4.2. Ուսումնառության կազմի վերապատրաստումն ավարտվում է թեստային ստուգումով, որը գնահատվում է հանձնաժողովի կողմից:
- 4.3. Հանձնաժողովի կազմվում է ԳՊՄԻ-ի ռեկտորի հրամանով:
- 4.4. Վերապատրաստման արդյունքում դասախոսին շնորհվում է վերապատրաստված մասնագետի կարգավիճակ՝ սահմանված նմուշի փաստաթուղթ՝ վկայագիր տրվելով: Անբավարար գնահատական ստացած դասախոսին տրվում է տեղեկանք՝ դասընթացներին մասնակցելու մասին և կազմակերպվում է վերահանձնում:
- 4.5. Վերապատրաստման արդյունքում ուսումնառության կազմի ներկայացուցչին շնորհվում է վերապատրաստված մասնագետի կարգավիճակ՝ սահմանված նմուշի փաստաթուղթ՝ վկայագիր տրվելով: Անբավարար գնահատական ստացած աշխատակցին տրվում է տեղեկանք՝ դասընթացներին մասնակցելու մասին և կազմակերպվում է վերահանձնում:
- 4.6. Վերապատրաստման պահանջներին չբավարարելու դեպքում ԳՊՄԻ-ին՝ ի դեմս ռեկտորի, կարող է դադարեցնել աշխատանքային պայմանագիրը: